ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձի առիթով, որպես Նրա հյուրը, ուխտավորաբար Մայր Աթոռում էր գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանը իր հարգելի կնոջ՝ տիկին Մարի Մանուկյանի հետ:

Նույն ուրախ առիթով և նույն նպատակով հարգելի նախագահի հետ Մայր Աթոռ էին ժամանել ԱՄՆ-ի Հ. Բ. Ը. միության Կենտրոնական հանձնաժողովի նախագահ տիար Էդվարդ Մարտիկյանը իր հարգելի կնոջ՝ տիկին Հեղինե Մարտիկյանի հետ, Կենտրոնական վարչության անդամներ մեթր Հակոբ Տերտերյանը, Ստիվըն Մուկարը (Ստեփան Մկրտչյան) և դոկտ. Տիգրան Փափազյանը:

Հանուն Հայոց Հայրապետի Երևանի օդանավակայանում հարգարժան հյուրերին դիմավորում և բարի գալուստ են մաղթում տ. Կոմիտաս և տ. Հուսիկ եպիսկոպոսները, վարդապետներ, սարկավագներ և Մայր Աթոռի պատասխանատու աշխատողներ:

Օդանավակայանում Մայր Աթոռի հյուրերին բարի գալուստ են մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ տիար Վարդգես Համազասպյանը:

Այնուհետև հյուրերը ուղևորվում են դեպի Մայր Աթոռ:

Մայր տաճարի առաջ հյուրերին ողջունում և դիմավորում է լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Մայր տաճարում, Իջման ս. սեղանի առաջ, ծնրադիր տիար Ալեքս Մանուկյանը և մյուս ուխտավորները կատարում են իրենց աղոթքն ու ուխտը:

Վեհարանում թանկագին հյուրերին ընդունում է Հայոց Հայրապետը:

Հոկտեմբերի 3-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձի օրը, Մայր տաճարում մատուցվում է եպիսկոպոսական հանդիսավոր ս. պատարագ, որին ներկա են լինում Մայր Աթոռի պատվարժան հյուրերը, ինչպես նաև բազում ուխտավորներ սփյուռքի զանազան երկրներից:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՀԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ
ԾԱՂԿՅԱ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Հավարտ ս. պատարագի Վեհարանի գահասրահում Վեհափառ Հայրապետը ընդունում է շնորհավորություններ։

Հանուն Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռի միաբանության Հայոց Հայրապետի տոնը շնորհավորում է լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

Հայոց Հայրապետի գահակալության 16-րդ տարեդարձը շնորհավորում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը։

Հ. Բ. Ը. միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանը ևս ոգեշունչ ճառով շնորհավորում է Հայոց Հայրապետին՝ երախտագիտություն հայտնելով ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին և մայր հայրենիք գտնվելու համար։

Վերջում Հայոց Հայրապետը գոհունակության խոսք է արտասանում և օրհնում բոլոր ներկաներին։

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը կազմակերպվում է պաշտոնական ճաշկերույթ՝ Վեհափառ Հայրապետի գահակալության առիթով և նաև ի պատիվ հյուրերի։

Ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է Հին Վեհարանի հիմնական վերանորոգության առթիվ կայացած հանդիսությանը։ Հին Վեհարանը վերանորոգվել է արդյամբ տիար Ալեքս Մանուկյանի։

Հոկտեմբերի 4-ին, երկուշաբթի, հյուրերը ուխտի են գնում ս. Գեղարդա պատմական վանքը։

Նույն օրը, ժամը 12-ին, վանքի բակում, Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է ս. Գեղարդա վանքի նորակերտ միաբանական երկհարկանի վանատան բացումը։ Վանատունը կառուցվել է Հ. Բ. Ը. միության նվիրատվությամբ, Ներկարարյան կտակի հաշվին։

Այնուհետև հարգարժան հյուրերը այցելում են ս. Գեղարդի տաճարը, գավիթը, տաճարի այլ սրբավայրերը, ապա շրջապատը։ Գեղարդա եկեղեցին և շրջապատը վերանորոգվել և բարեկարգվել են տիար Էդվարդ Մարտիկյանի նվիրատվությամբ։

Հոկտեմբերի 4-ին, երեքշաբթի օրը, հյուրերին ընդունում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը։

Հոկտեմբերի 6-ին, հինգշաբթի օրը, տիար Ալեքս Մանուկյանին և հարգարժան հյուրերին ընդունում է Երևանի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Գրիգոր Հասրաթյանը։

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, հյուրերը այցելում են հոգևոր ճեմարան։

Հոկտեմբերի 7—8 օրերին հյուրերը այցելում են Սևան, Դիլիջան, Հաղարծնի վանք և Կիրովական։

Ս. Էջմիածնում և մայր հայրենիքում գտնված օրերին, հոկտեմբերի 4—10 օրերին, տիար Անքս Մանուկյանը և հարգելի հյուրերը այցելում են ս. Հռիփսիմեի, ս. Գայանեի վանքերը, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոցի եկեղեցին և դամբարանը, Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան, Էրեբունիի թանգարան, Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես, Սարդարապատի հուշարձանախումբ, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան,

Երևանի էլեկտրագործարան, պետական համալսարան, պատմության թանգարան, Բյուրականի աստղադիտարան և պետական կենտրոնական արխիվ:

Հոկտեմբերի 10-ին, կիրակի օրը, հյուրերը ներկա են լինում Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագին:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը հյուրերի պատվին տրվում է հրաժեշտի ճաշկերույթ:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, հյուրերը Երևանում, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, ներկա են լինում Կոմիտաս վարդապետի հիշատակին նվիրված գրական-երաժշտական երեկույթին:

Հոկտեմբերի 11-ին, երկուշաբթի, տեր և տիկին Էդվարդ և Հեղինե Մարտիկյանները, մեթր Հակոբ Տերտերյանը, տիար Ստիվըն Մուկարը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնում են անմոռաց տպավորություններով:

Հոկտեմբերի 12-ին, երկուշաբթի, տիար Ալեքս Մանուկյանը այցելում է «Էջմիածին» ամսագրի խմբագրություն, Մայր Աթոռի տպարան, դիվանատուն, տնտեսական ու ֆինանսական բաժիններ և արհեստանոցները:

Հոկտեմբերի 14-ին, հինգշաբթի, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ տիար Բադալ Մուրադյանը ընդունում է Հ. Բ. Ը. միության նախագահ տիար Ալեքս Մանուկյանին:

Ջերմ զրույցի ժամանակ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը վեր է հանում Հ. Բ. Ը. միության սփյուռքում ծավալած հայրենասիրական և մշակութային շնորհակալ գործունեությունը:

Հոկտեմբերի 15-ին, ուրբաթ, ժամը 16-ին, Երևանում, «Արմենիա» ճաշարանում, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ողջերթի ընդունելություն են կազմակերպում՝ ի պատիվ տեր և տիկին Ալեքս-Մարի Մանուկյանների:

Ողջերթի ընդունելությանը ներկա է լինում Հայոց Հայրապետը՝ տ. Հայկազուն և տ. Տիրան արքեպիսկոպոսների ընկերակցությամբ:

Ընդունելությանը մասնակցում էին նաև պետական անձնավորություններ, մինիստրներ, հայրենի մտավորականության, գիտության, արվեստի, մամուլի ներկայացուցիչներ:

Հոկտեմբերի 16-ին, շաբաթ, առավոտյան ժամը 9-ին, տիար Ալեքս Մանուկյանը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և մայր հայրենիքից:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, տիար Ալեքս Մանուկյանին և տիկին Մարի Մանուկյանին բարի ճանապարհ է մաղթում տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Տիար Ալեքս Մանուկյանին ճանապարհում են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ տիար Վարդգես Համազասպյանը և այլ պաշտոնական անձինք:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

18-ը հոկտեմբերի 1971 թ.,
Ս. Էջմիածին



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՅՈՒՐԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆԻ ԱՌԱՋ